

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**

*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

<b>Սեյրան Չաքարյան</b> - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
<b>Сейран Закарян</b> - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
<b>Seyran Zakaryan</b> - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
<b>Հասմիկ Ամիրջանյան</b> - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
<b>Асмик Амирджанян</b> - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
<b>Hasmik Amirjanyan</b> - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
<b>Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան</b> - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
<b>Вардан Мхитарян, Гоар Гамбарян</b> - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
<b>Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan</b> - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
<b>Լիլիթ Մակարյան</b> - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
<b>Лилит Макарян</b> - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
<b>Lilit Makaryan</b> - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGES OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
<b>Ֆելիքս Մովսիսյան</b> - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
<b>Феликс Мовсисян</b> - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
<b>Felix Movsisyan</b> - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
<b>Սուսաննա Առաքելյան</b> - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

<b>Сусанна Аракелян</b> – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896. ....	87
<b>Susanna Arakelyan</b> – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896. ....	87
<b>Գեղամ Բաղայան</b> – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
<b>Гегам Бадалян</b> – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды). ....	115
<b>Gegham Badalyan</b> – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir). ....	115
<b>Աննա Վարդանյան</b> – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ .....	117
<b>Анна Варданян</b> – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ. ....	123
<b>Anna Vardanyan</b> – DIANA ABGAR - “MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS. ....	124
<b>Գայանե Հովհաննիսյան</b> – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ .....	125
<b>Гаяне Оганнисян</b> – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г. ....	132
<b>Gayane Hovhannisyan</b> – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926). ....	133
<b>Արտակ Խաչատրյան</b> – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
<b>Артак Хачатрян</b> – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
<b>Artak Khachatryan</b> – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917). ....	141
<b>Մանյակ Երանոսյան</b> – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ) .....	142
<b>Маняк Ераносян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
<b>Manyak Yeranosyan</b> – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER). ....	150

<b>Գևորգ Կեսոյան</b> - ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
<b>Геворг Кесоян</b> - СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
<b>Gevorg Kesoyan</b> - THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
<b>Արման Սաֆարյան</b> - ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
<b>Арман Сафарян</b> - РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
<b>Arman Safaryan</b> - THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
<b>Սարգիս Սկրտչեան</b> - ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
<b>Саргис Мкртчян</b> - ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
<b>Sargis Mkrtchian</b> - ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
<b>Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան</b> - ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
<b>Мери Наджарян, Рипсима Мурадян</b> - ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
<b>Meri Najaryan, Hripsime Muradyan</b> - GERMANY'S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
<b>ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY</b>	
<b>Գևորգ Եաղարյան</b> - ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
<b>Геворг Тшагарян</b> - НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
<b>Gevorg Tshagharian</b> - ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
<b>Լիզա Քարիմյան</b> - ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
<b>Лица Каримян</b> - КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ «КОНТАКТНОЙ» ЗОНЫ В АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

*Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE.* ..... 217

**ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.)** ..... 218

**Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.)** ..... 222

**Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS)** ..... 223

**Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ)** ..... 228

**Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.)** ..... 235

**Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY)** ..... 235

**ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

**Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ** ..... 237

**Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА** ..... 247

**Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS** ..... 248

**Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ** ..... 249

**Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США** ..... 257

**Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA** ..... 257

**Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ** ..... 259

**Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА** ..... 272

**Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY.** ..... 273

**Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ** ..... 274

**Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА.** ..... 280

**Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN.** ..... 281

**ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY**

**Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)**..... 282

**Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ.** ..... 289

**Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN.** ..... 289

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

**Էրիկ Գալեգիսի Միլապեան, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 Էջ + 16 Էջ ՆԵՐՂԻՐ:**..... 291

**ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ..... 293

**ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՂՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 Էջ:**..... 295

**ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ** ..... 298

**ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ** ..... 315

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 318

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 320

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 322

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 322

## Ռաֆիկ Նահապետյան

### ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ (XIX դ. – XX դ. սկիզբ)

*Հիմնաբառեր. ազգատոհմ, ազգակցական թաղ, բնակավայր, գերդաստան, Գյումրի, ձմեռանոցներ, կցաթաղ, ընտանիք, ազգակցական գերեզմանոցներ, Բերդ, Սասուն, Չանգեպուր:*

Հայկական լեռնաշխարհը բնակավայրային և բնակարանային կենսակերպի ու ավանդների հնագույն հայրենիք է<sup>1</sup>: Հիշատակելի է, որ մինչև XX դ. 40-50-ական թթ. դեռ պահպանվում էր ազգատոհմային համատեղ բնակեցմամբ՝ առանձին բնակավայրով կամ թաղերով ապրելու սովորույթը: Դեռևս XIX դ. վերջերին կարելի էր հանդիպել ազգակցական թաղերով, իսկ բացառիկ դեպքերում նաև մեկ ազգի<sup>2</sup> ընտանիքներով բնակեցված փոքր բնակավայրերի, որոնք հիմնականում կոչվում էին տվյալ ազգատոհմի հիմնադրի անունով: Այս կամ այն ազգատոհմի անվանման տարածումը բնակավայրի անվան վրա պայմանավորված էր ոչ միայն տվյալ ազգի ընտանիքների թվով, այլև նրանց բնակեցման վաղ շրջանով, ազգատոհմի հիմնադրի հեղինակությամբ:

Ազգատոհմի տնտեսական և գաղափարական շահերը պահանջում էին ունենալ փոխադարձ օգնության, տնտեսական-արտադրական կյանքը կազմակերպելու և ինքնապաշտպանության հնարավորություն, որի գլխավոր պայմանը ազգի ընտանիքների համատեղ բնակվելն էր՝ երբեմն կազմելով առանձին գյուղ կամ գյուղակ, իսկ հետագայում՝ առավելապես թաղամաս: Համախմբված թաղը հայ իրականության մեջ ամենից առաջ ուներ պաշտպանական նշանակություն: Բնակավայրերի առաջացման պատմությունը ցույց է տալիս, որ դրանք սկզբնապես բնակեցված են եղել մեկ գերդաստանի ճյուղավորումից առաջացած ընտանիքներով: Հետագայում են միայն համալրվել այլ ազգատոհմերի պատկանող ընտանիքներով: Այդպիսի բնակավայրերը հիմնականում կրել են մեծամասնություն կազմող հեղինակավոր գերդաստանների հիմնադիրների անունները: Ազգակից թաղերով բնակության համակարգը ավելի կայուն էր ու հարատևել է մինչև XX դ. 50-ական թթ. լեռնային և նախալեռնային բնակավայրերում, որտեղ չկար բնակչության հոսունություն: Դրանցում թաղերի միջև բնական սահման եղել են աշխարհագրական, տեղագրական միջավայրերը՝ կիրճերը, բլուրները, գետակները և այլն, իսկ հովտային գոտու գյուղերում դրանք հեշտությամբ խառնվել են իրար:

Ազգակցական թաղերը սովորաբար կազմվում էին ազգի հիմնադրի ընտանիքի տրոհմամբ և դուստր ընտանիքների առաջացմամբ: Առանձնացած դուստր ընտանիքներն իրենց տները վերակառուցում կամ կառուցում էին կողք կողքի, միմյանց կպած: Մայր ընտանիքից բաժանված յուրաքանչյուր նոր ընտանիքի համար նախօրոք կառուցված տան համալիրը կցվում էր մայր համալիրին: Հետագայում առանձնացված նոր ընտանիքի շենքերը դարձյալ կցվում էին նախորդներին և հնարավորության դեպքում շարք ստեղծում փողոցի

\* Հոդվածը ներկայացվել է 18.11.2020 թ., գրախոսվել՝ 06.12.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

<sup>1</sup> Նահապետյան Ռ., Հայկական լեռնաշխարհը՝ բնակարանաշինական ավանդների հնագույն կենտրոն, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Ե., 2020, էջ 39-53:

<sup>2</sup> Ազգը կամ ազգատոհմը մեծ կամ փոքր արյունակից ընտանիքների խումբ է, որ կազմավորվել է գերդաստանի ուղիղ վարընթաց (որդիների, թոռների, ծոռների խումբ) և հորիզոնական (հորեղբոր որդիների, նրանց թոռների, ծոռների խումբ) ճյուղավորմամբ և այս կամ այն չափով ու ձևով պահպանել է տնտեսական, տարածքային, հասարակական և գաղափարական միասնություն, կրում է ընդհանուր՝ ազգի հիմնադրի անվամբ և գործունեությամբ պայմանավորված ազգակցական անվանումը: Տե՛ս Նահապետյան Ռ., Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրություն, Ե., 2012, էջ 207:



մի եզրի վրա: Փաստորեն գերդաստանի երբեմնի տան մեկ մուտքի փոխարեն սրա շուրջն աճած պատկից տները բազմապատկվում, նոր տարածքներ էին գրավում. դռները, որ հին սովորության համաձայն բացվում էին միայն արևելյան կողմից, այժմ բացվում էին գրեթե բոլոր կողմերից: Տների կտուրները մի ընդհանուր հարթություն էին: Ազգակից ընտանիքների տները թիկունք թիկունքի էին տալիս, ժամանակի ընթացքում ընդլայնվում և երկարում էին: Իսկ եթե տեղանքը հնարավորություն չէր տալիս, կցաթաղն ընդունում էր անկանոն շրջանի, քառակուսու և այլ տեսք՝ հորիզոնի բոլոր կողմերին ուղղված դռներով: Այս պարագայում խիստ նեղվածքն անխուսափելի էր դառնում:

Ազգակցական թաղերի տները ներսից միմյանց հետ կապված էին նեղլիկ դռներով կամ պատուհաններով, որոնք հայտնի են «ակնատ» կամ «դրիճակ» անվանումներով: Սատունում դրանք անվանել են «շբակ», Մուշում «խոռ», Տիգրանակերտում «ակնակ», այլ տեղերում՝ նաև «աչքունք», որ ծառայում էին նաև իբրև որմնախորշ, որմնապահարան: Սրանք հաղորդակցության լավ միջոցներ էին և, տնտեսականից զատ ունեցել են պաշտպանական նշանակություն: Ազգակցական կցատները և անգամ կցաթաղերը առաջին հերթին ինքնապաշտպանության գործառույթ ունեին: Դրանց միջոցով ազգի ընտանիքները հարևանություն էին անում, լուրեր հաղորդում, իրեր փոխանակում, վտանգի դեպքում ինքնապաշտպանություն կազմակերպում: Ուրախ կամ բոթաբեր լուրերը մեկ ակնթարթում թաղի մի ծայրից մյուս ծայրն էին հասնում, թշնամու հարձակումների դեպքում ոտքի էր կանգնում ամբողջ ազգը:

Հայաստանի Հանրապետության շատ շրջաններում մինչև XX դ. 20-30-ական թթ. պահպանվում էին ակնատավոր շենքերով որոշ թաղամասեր կամ առանձին բնակարաններ: Այսպես, Գյումրի քաղաքի երկու մեծ թաղամասերի՝ «Գեղացոց մահիլ» և «Ձորի բողազի» կամ «Ձորի մահիլ» հարևանությամբ ապրող ընտանիքների բնակարաններին կից պատերին անընդմեջ բացված ակնատների միջոցով քաղաքի այս հատվածի բնակչությունը վտանգի դեպքում չափազանց արագ տեղեկացվում էր:

Ստեփան Լիսիցյանը գրում է, որ դեռևս XX դ. 20-ական թթ. վերջերին Մեղրու շրջանի գյուղերի ազգակցական կամ հարևանական թաղամասերի բնակարաններին կից կամ ընդհանուր պատերին բացում էին հատուկ քառակուսի անցքեր՝ «միմյանց կրակ, ուտելիք, ամանեղեն, մանր իրեր կամ տեղեկություններ փոխանցելու համար: Դրանք խոսում են անմիջական հարևանների միջև անցյալում գոյություն ունեցած սերտ տնտեսական և, ամենայն հավանականությամբ, նաև ազգակցական կապերի մասին»<sup>1</sup>:

Ակնատները բավականաչափ մեծ էին, որտեղով ֆիդայիները կամ հեղափոխականները պետք է տնից-տուն անցնեին և թաքնվեին թուրքական կամ ռուսական ոստիկանների հետապնդումներից<sup>2</sup>: Ստեփան Լիսիցյանը գրում է. «Տիգրիսը, որտեղ վրացական պետական կազմակերպության մեջ դասակարգային շերտավորումը համեմատաբար ավելի խորացած էր և բարդված, քան թե Անդրկովկասի այլ վայրերում, հայկական բնակչության մեջ գերիշխում էր գերդաստանային կազմակերպությունը ոչ միայն աշխատավորների և մանր առևտրականների խավի, այլև խոշոր վաճառականների՝ **մօթալաքեների**՝ առաջնակարգ **քաղքըղիների** ու իշխանական տների մեջ: Հին Տիգրիսում Չիթախենք, Ումիկենք, Գուլուլենք, Խատիսենք, Շերմազանենք կազմում էին մի-մի դեռ անբաժան և տնտեսապես ներքուստ սերտ շաղկապված գերդաստաններ: Բեիբուլթենց իշխանական տունն իր յոթանա-

<sup>1</sup> Лисициан С., Из материалов по изучению жилищ Армении. Крестьянское жилище Мегринского района, "Известия Кавказского историко-археологического института", Тифлис, 1927, VI, էջ 131:

<sup>2</sup> Տե՛ս Լիսիցյան С., Очерки этнографии дореволюционной Армении, "Кавказский этнографический сборник", I, М., 1955, էջ 202-203:

սուն անդամներով միատեղ, միևնույն դարպասում էին ճաշում: Միայն հիվանդներն ու ծերունիներն էին ստանում իրենց բաժինն առանձին»<sup>1</sup>: Դա նշանակում է, որ Բեհրուսթենց ազգական ընտանիքները ապրում էին պատկից, պարսպապատ, մեկ դարպասով ընդհանուր բակ ունեցող տներում:

Ազգակցական թաղերի ընդլայնումը հանգեցնում էր կցաթաղերի առաջացմանը, և ակնատային համակարգը գործում էր գրեթե ամբողջ բնակավայրում: Ակնատները կամ այսպես կոչված «անթել հեռախոսի» այդ նախնական ձևերը հայերի մեջ նորություն չէին: Ինչպես ցույց են տալիս Կարմիր բլուրի պեղումները, դրանք հայտնի էին դեռևս ուրարտական ժամանակներից: Ըստ Յ. Մարտիրոսյանի հետազոտությունների՝ նման պատկեր է արձանագրվել վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում: Տոհմական բնակատեղիները բաղկացած էին ընտանեկան միակտուր թաղերից, որոնք հազիվ էին իրարից բաժանվում ծուռ ու մուռ, նեղ փողոցներով: Բնակավայրի յուրաքանչյուր թաղ աճում ու ընդլայնվում էր յուրովի՝ իր ներքին օրենքներին համապատասխան, նահապետական ընտանեկան համայնքի տրոհմանը զուգահեռ: Այդ համայնքների տնտեսական ու կենցաղային պահանջներով էին պայմանավորված գոյություն ունեցող «տնաշինարարական» հաստատուն ու որոշակի կանոնները, որոնք ակնհայտորեն առկա են, օրինակ, Կարմիր բլուրի շինությունների համալիրներում և իրենց ճարտարապետական ձևերով հիշեցնում են Արարատյան դաշտավայրի հնագույն բնակատեղիները, հատկապես Շենգավթի վաղ բրոնզեդարյան բնակատեղին, ինչպես և Յին Արևելքի վաղ երկրագործական ցեղերի կացարանները<sup>2</sup>: Ակնատներ էին սարքում նաև բակերի պարիսպների վրա, որոնցով հարևանություն էին անում: Դրանք տնտեսական և ինքնապաշտպանական նշանակություն ունեին ոչ միայն ազգակցական ընտանիքների, այլև գյուղի ամբողջ բնակչության համար<sup>3</sup>:

Սասունում, Դերսիմում և Արևմտյան Հայաստանի լեռնային այլ գավառներում հիշատակվում են գյուղեր, որոնք բնակեցված են եղել բացառապես ազգականներով<sup>4</sup>: Հայկական գյուղը վերածվում էր կցաթաղերի մի զանգվածի՝ կյրության ձգտող հատակագծով: «Ազգի» ընտանիքների տները շատ հաճախ այնպես էին կպած միմյանց, որ ամբողջության մեջ հիշեցնում էին միասնական ճարտարապետական համալիր:

Ազգակցական կցաթաղի մեջ ոչ ազգակից որևէ ընտանիքի խցկելը անհանդուրժելի էր: Այս սովորույթը Արևմտյան Հայաստանի լեռնային շատ բնակավայրերում պահպանվել էր մինչև Մեծ եղեռնը և գաղթը:

Ազգատոհմի որևէ ընտանիքի վերանալու դեպքում նրա տունն ու տեղը ժառանգում էր ամենամերձավոր ազգականը՝ որդին, եղբայրը, հորեղբայրը և այլն: Վերացման եզրին կանգնած ընտանիքները, սակայն, բարոյական իրավունք չունեին տունը կտակել ոչ ազգակից որևէ ընտանիքի: Այդպիսի քայլին ամբողջ ազգն ընդդիմանում էր: Բայց տնփեսան իրավունք ուներ ժառանգելու ամբողջ տունը և նրա վարելահողերը: Ազգանդամն իրավունք չունեի վաճառելու իր վարելահողերը ոչ ազգակից գևորդի: Յուրայինները նրան խորհուրդ էին տալիս այդ հողերը վաճառել ազգի որևէ անդամի՝ ազգի հարստությունը «ներսում» պահելու մտադրությամբ:

Մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի շատ շրջաններում ազգակից թաղերով բնակության սովորույթը էական փոփոխությունների չէր ենթարկվել անգամ մինչև XX դ. սկզբները, թեև քաղաքամերձ հով-

<sup>1</sup> Լիսիցյան Ա., *Չանգեպուրի հայերը*, Ե., 1969, էջ 227:

<sup>2</sup> Տէ'ս Մարտիրոսյան Ա., *Город Тейшебауни*, Ե., 1961, նկ. 8-10, էջ 28-31, նույնի՝ *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ե., 1964, էջ 160-190:

<sup>3</sup> Տէ'ս Եձոյան Բ., *Кровнородственный "азг" и родственные отношения у армян*, *Советская этнография*, № 1, 1952, էջ 7, նույնի՝ *Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ)*, Ե., 1974, էջ 155-165:

<sup>4</sup> Տէ'ս Հալաջյան Գ., *Դերսիմի հայերի ազգագրությունը*, *ՅԱԲ*, հ. 5, Ե., 1973, էջ 201, Պետրոսյան Վ., *Սասնա ազգագրությունը*, Ե., 1965, էջ 230-231:

տային շրջաններում գերդաստանական տների տրոհման հետևանքով առաջացած՝ մերձավոր ազգականների կցատներով թաղամասերը ծավալվելով միավորվել էին հարևան ազգակցական թաղերին՝ կազմելով կցաթաղեր<sup>1</sup>:

Տարածքային միասնությունը դրսևորվում էր նաև հեռագևա անասնապահության ժամանակ. սարվորների կացարանները՝ օղաները, հիմնվում էին կողք կողքի: Տավուշում օղա էին անվանում ամառանոցներում և ձմեռանոցներում սարվորների ժամանակավոր տները: Եթե նույնիսկ բուն բնակավայրում տարածքային ամբողջականությունը խախտվել էր, ապա նույնը չէր կարելի ասել օղաների վերաբերյալ, որտեղ անպայման ազգակիցները հաստատվում էին կողք կողքի: Եղել են դեպքեր, երբ ձմեռանոցները վերածվել են մշտական բնակավայրերի: Ձմեռանոցում հաստատված ազգը ժամանակի ընթացքում բազմանալով՝ սկսում էր յուրացնել շրջապատի ազատ տարածքները՝ տներ կառուցելով, որոնք հետագայում դրանք վերածվում էին մշտական բնակավայրի: Պապենական տնից անջատված դուստր ընտանիքները, բնակվելով իրար կողքի, ստեղծում էին ազգակցական թաղամաս: Նման օրինակներ են Տավուշի Արծվաբերդ, Նավուր, Ենոթավան, Խաշթառակ գյուղերը, Գեղարքունիքի մարզի Թթուջուր բնակավայրը և այլն: Դեռ ոչ վաղ անցյալում Տավուշի Արծվաբերդ գյուղում հարևանությամբ ապրել են Ասիլբեկյան գերդաստանի սերունդները՝ Ավետի երեք որդիների ընտանիքները, սակայն թաղամասը հայտնի է այլ անվանումով՝ Բուղաքար: Պատճառը այլ ազգի ընտանիքների մուտքն էր տվյալ թաղամաս: Իսկ կցաթաղի վերածված թաղամասն էլ ստացել է բնական դիրքով պայմանավորված աշխարհագրական անվանում՝ Վերին թաղ, Ներքին թաղ, Աղբրի թաղ, Ձորի թաղ, Ժամի թաղ, Այնկույսներ և այլն: Այդ նույն գյուղում ազգակից ընտանիքները հիմնականում համախմբված են բնակվել:

Ազգատոհմային կապերը լավ պահպանված էին հիմնականում տարածքային հարևանությամբ թաղերում, լեռնային և նախալեռնային, հաղորդակցության ուղիներից կտրված բնակավայրերում: Ազգի ունևոր ընտանիքը օտարի մուտքն արգելելու նպատակով սեփականացնում էր գաղթող ազգակցի տունն ու հողատարածքը: Սակայն երբեմն անխուսափելի էր դառնում այն օտարին վաճառելը, օրինակ, երբ նոր թաղակիցը իրենց հետ ինամիական կամ բարեկամական և այլ կապեր էր հաստատում: Հետզհետե կցաթաղերի մեջ տարբեր եղանակներով այլ ազգատոհմերի ներկայացուցիչների հաստատվելը համատարած բնույթ էր ստանում: XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին ազգակցական կապերը վերջնականապես փոխարինվեցին հարևանական, տարածքային կապերով, երբ ազգականների տարածքային միասնության պահպանումը դառնում էր գրեթե անհնարին: Այդ գործընթացը արագացավ XX դ. 20-30-ական թթ. խորհրդային շրջանում՝ ինդուստրացման և կոլեկտիվացման նոր քաղաքականության կենսագործմամբ: Նորաստեղծ անհատական ընտանիքը տուն էր կառուցում մի այլ հողամասում, օրինակ՝ գյուղից դուրս, չանվանակոչված տարածքներում՝ ձևավորելով նոր թաղամասեր, որոնք անվանվում էին տարածքի բնական դիրքին համապատասխան կամ էլ այլ սկզբունքով, օրինակ՝ «անկիսուր մահլա» (թաղ):

Օբյեկտիվ հանգամանքների բերումով թուլանում էին ազգակցական կապերը, վերանում էր նաև ակնատային համակարգով և կցատներով ապրելու անհրաժեշտությունը: Տնտեսական ու հասարակական նոր պայմաններում հիմնվում էին նոր, բարեկեցիկ, լուսամուտավոր բնակարաններ, ուղիղ ու լայն փողոցներ, աստիճանաբար անհատի շահերը շաղկապվում են հասարակության շահերի հետ, ինչի շնորհիվ վերանում էին հին ազգակցական կցաթաղերի մնացուկները: Հարթավայրային շրջաններում տարածքային միասնությունը պահպանում էին հիմնականում մերձավոր ազգականները:

Ազգակցական թաղերի պահպանման հարցում կարևոր դեր էր խաղում նաև բնակչության մշտական բնակեցվածությունը և արտահոսքի բացակայությունը: Այն գյուղերում,

<sup>1</sup> Տե՛ս Նահապետյան Ռ., Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), ԵՊՀ հրատ., Ե., 2012, էջ 95:

որտեղ բնակչության ներհուսք չկար, ազգակցական թաղերն ավելի կայուն էին պահպանվում: Դրանք հիմնականում զուրկ էին տնամերձ հողից կամ այլ տարածքներից: Մինչև XX դ. կեսերը Իջևանի տարածաշրջանի Աչաջուր գյուղում հստակ առանձնանում էին ազգակցական թաղերը: Ընդհանուր առմամբ գյուղն այդ տարիներին ուներ 35 թաղ, որոնք պահպանում էին ոչ միայն ազգի անվանումը, այլ նաև ազգի միատարրությունը: Օրինակ՝ Մելիքբեկանց թաղում բնակվում էին մոտ քառասուն ազգակից ընտանիքներ, իսկ Ղալթախյան ընտանիքները երեսունմեկն էին, որոնք զբաղեցնում էին երկու թաղամաս՝ մեկում՝ քսաներկու, մյուսում՝ ինը ընտանիք<sup>1</sup>:

Ազգի տարածքային միասնության վկայություն էր նաև ընդհանուր ազգակցական գերեզմանաշարք ունենալը, գրեթե այնպես, ինչպես ազգակցական թաղերը: Ազգակցական հատուկ գերեզմանատներ մեզ հայտնի չեն: Քանի դեռ որևէ գերդաստան միայնակ էր, սրա գերեզմանաշարքը կրում էր ընտանեկան բնույթ: Այդպիսի շարքերը չէին մեծանում: Բայց ազգակցական խմբի մեծացմամբ մեծանում էին նաև ազգակցական գերեզմանաշարքերը<sup>2</sup>:

Գերեզմանաշարքն իր հերթին, եթե հնարավոր էր լինում, պահպանում էր ընտանիքների դասավորության կարգը: Գոնե ամուսինների համար դա կիրառվում էր առանց վերապահության: Մի գերեզմանաշարքը լրանալիս ընտրվում էր նորը: Մեր օրերում գերեզմանաշարքերը առավելապես ընտանեկան, քան ազգակցական բնույթի են:

Ի մի բերելով նշվածը՝ կարող ենք ասել, որ XIX-XX դդ. մենք ունեցել ենք ազգակիցներով համախմբված ապրելու երեք ձև:

**1. Ողջ ազգը զբաղեցրել է մի գյուղ:** Այս ձևը առավել տարածված է եղել միջնադարում: Այս մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Թովմա Արծրունին. «Եվ բնակեն առանձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝ մինչ թե ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղաց ուժգին խանչիցէ, հազիւ թէ ուրէք կարիցէ առնուլ զբոմբին ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով»<sup>3</sup>:

Վաղ միջնադարյան հիշատակություններից երևում է, որ բնակավայրերի մեծ մասը կոչվել է առանձին ազգերի անուններով՝ Ռշտունյաց գավառ կամ Ռշտունիք, Սյունաց աշխարհ կամ Սյունիք և այլն: Սրանք ծագել են նախարարական տների անվանումներից: Արևմտյան Հայաստանի որոշ բնակավայրերի անվանումների ստուգաբանությունը ևս կապվում է ազգանվանումների հետ, որպիսիք են՝ Կծանք, Արենանք, Աղամանք և այլն<sup>4</sup>: Աբխազիայում և Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզում XIX դ. վերջերին հայկական բնակավայրերը կոչվում էին թվաբանակով գերիշխող ազգի անունով<sup>5</sup>: Սա առավել արտահայտված էր արոտավայրային ժամանակավոր բնակավայրերում: Եթե նույնիսկ բուն բնակավայրում տարածքային ամբողջականությունը չէր պահպանվում, ապա նույնը չի կարելի ասել արոտավայրային կացարանների վերաբերյալ, որոնցում ազգակիցները անպայման հաստատվում էին կողք կողքի՝ ժամանակավոր սեզոնային բնակավայր կամ առանձին թաղամաս հիմնելով: Օրինակ՝ Բերդում Անանյանների թաղի ընտանիքները 1950-ական թվականներին կորցնելով նախկին միասնությունը՝ բնակվում էին քաղաքի տարբեր հատվածներում, միայն ազգի հիմնադրի թոռների՝ երեք եղբայրների տներն էին կողք կողքի, մինչդեռ բիսաներում՝ արոտավայրային կացարաններում, նույն ազգի տները միասնական թաղամաս էին հիմնել: Նույն պատկերն էր նաև ձմեռանոցներում, որոնք անգամ կրում էին հիմ-

<sup>1</sup> Տէ՛ս Կարապետյան Զ., *Подственная группа "азг" у армян*, Е., 1958, էջ 76:

<sup>2</sup> Տէ՛ս Նահապետյան Ռ., *Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ)*, տ. 6, 7, 9, 1971-1972, *Աշտարակի տարածաշրջանի Ուջան, Լեռնարոտ, Ավան, Թալինի տարածաշրջանի Իրինդ, Կաթավաձոր, Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Շղարշիկ, Աշնակ գյուղերում ազգակցական հարաբերությունների վերաբերյալ գրառված նյութեր*:

<sup>3</sup> Թովմա Արծրունի, *Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս*, 1917, էջ 134:

<sup>4</sup> Տէ՛ս Կարապետյան Ե., *Սասուն (ազգագրական նյութեր)*, Ե., 1963, էջեր 3-4, 50:

<sup>5</sup> Տէ՛ս Կարապետյան Զ., *նշվ. աշխ.*, էջ 89-92:

նադրի ազգի անվանումը: Ե. Կարապետյանի հավաստմամբ՝ Սասունում, սովորույթի համաձայն, գոմերն ու մարագները հիմնվում էին արոտավայրերին մոտ, գյուղերից դուրս, հետագայում դրանք աստիճանաբար մեծանալով՝ վերածվում էին ազգակցական մշտական բնակավայրերի<sup>1</sup>: Գ. Հալաջյանը նույնպես նշում է, որ Դերսիմում կային գյուղեր, որոնք բնակեցված էին եղել միայն մեկ ազգակցական խմբի ընտանիքներով<sup>2</sup>:

XIX դ. վերջին արձանագրվել են արևելահայերի շրջանում մեկ ազգակցական խմբի ընտանիքներից կազմված բնակավայրերի մասին նյութեր: Այդպիսին են Ե. Լալայանի հաղորդած տեղեկությունները Լոռվա Իգահատ (այժմ Այգեհատ) և Արդվի բնակավայրերի մասին: Դրանցից յուրաքանչյուրը բնակեցված էր մեկ ազգով՝ Իգահատը՝ Շահվերդյաններով, Արդվի գյուղը՝ Քալանթարյաններով: Ուշագրավ է, որ նշված բնակավայրերը այդ ազգերի անուններով չեն կոչվել<sup>3</sup>: Ստ. Լիսիցյանի հավաստմամբ՝ Չանգեզուրում Բեխ գյուղը կազմված է եղել գրեթե բացառապես Մելիք-Փարսադանյաններից: Այդ մելիքական տան բազմանալն էր պատճառ դարձել Հալիձորի նեղ պատերը թողնելու և տնատեղերի համար ավելի ընդարձակ տարածք տեղափոխվելու, որի արդյունքում հիմնվեց Բեխ գյուղը: Նոր բնակավայրում նշյալ իշխանական տունը չէր հաստատվել ընդհանուր տնտեսությամբ, այլ յուրաքանչյուր ընտանիք, առանձնացնելով իր վարելահողերը, արոտավայրերն ու անտառամասերը, ստանում է իր անջատ եկամուտները և ինքնուրույն սպառում էր դրանք ըստ իր կարիքների: Միայն Հալիձորի պղնձահանքերը մնացին չբաժանված, և մինչև Հայաստանի խորհրդայնացումը դրանցից ստացված ընդհանուր եկամուտը բաշխվում էր ազգական ճյուղերի միջև որոշ բաժիններով<sup>4</sup>:

**2. Ազգակցական թաղեր հիմնելը:** Այս ձևը XIX դ. վերջերին տարածված էր Հայաստանի լեռնային ու նախալեռնային շրջաններում: Արևելյան Հայաստանի գյուղերում ազգակցական թաղամասերով բնակեցման մասին գրում է Ստ. Լիսիցյանը, նշելով, որ ամբողջական թաղամասեր կրում էին ազգակցական անվանումներ. Հաղպատում՝ Եղիազարյաններ, Դսեղում՝ Չատիկյաններ, Թումանյաններ, Գորիսում՝ Մինասանց, Դուլունց: Դեռ 1960 թ. նա հսնծորեսկում արձանագրել է 13 ազգակցական թաղ: Ռուսական տիրապետության հաստատման առաջին տասնամյակներում ազգական գերդաստանները, բազմանդամ ծխերը, հավանական է, որ մեծ մասամբ դեռ բնակեցված էին միևնույն թաղում, իրարից ոչ հեռու: Այդպես էր, օրինակ, հսնծորեսկում: Այդպիսի թաղերում դրկիցության և ազգակցության կապերն իրար հետ խաչաձևվում էին և դրանց կից մշակվում էին միջթաղային փոխհարաբերության ձևերը<sup>5</sup>:

Այնուհետև Ստ. Լիսիցյանն ավելացնում է. «Ճշմարիտ է՝ հին գյուղերում թաղերը հաճախակի, այժմս էլ կրում են արյունակցական անուններ, այսպես. հսնծորեսկում՝ Արչանց, Կատվանց, Բըրդանոնց (դդում), Բոզունց, Դադալունց բերդ (որտեղ սպանվել էր Մխիթար սպարապետը), որի դիմացն է Ջանունց բերդը: Թաղերը ունենում էին և հատուկ իրենց բերդը Գորիսում՝ Մինասանց, Դուլունց ձորը, Ափունց քալաբերդը, Օհանին թաղը: Դրանք մեծ մասամբ աճած գերդաստաններ են, իրարից բաժանված ընտանիքներից առաջացած և կազմում են **ասկ** կամ **ցղխ** (ցեղ)»<sup>6</sup>: Միսիանի Լծեն գյուղը, որ փռված է բարձր լեռան վրա, վատ ճանապարհների պատճառով առանձնացվել է հարևան գյուղերից և երկար ժամանակ բնակեցված էր մեկ ազգի ընտանիքներով՝ Գրիգորյաններով, որոնք այստեղ էին տեղափոխվել 1830 թ. Պարսկաստանի խոյ գավառից: Ավելի ուշ այստեղ են հաստատվում

<sup>1</sup> Տե՛ս Կարապետյան Ե., *Նշվ. աշխ.*, էջ 3-4, նաև Պետոյան Վ., *Սասնա սպազարություն, Ե.*, 1965, էջ 9-10, 14-15 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Հալաջյան Գ., *Նշվ. աշխ.*, էջ 230-231:

<sup>3</sup> Տե՛ս Լալայան Ե., *Բորչալու գավառ, Երկեր, հ. 3, Ե.*, 2004, էջ 152:

<sup>4</sup> Տե՛ս Լիսիցյան Ստ., *Չանգեզուրի հայերը*, էջ 228:

<sup>5</sup> *Նույն տեղում*, էջ 230:

<sup>6</sup> *Նույն տեղում*, էջ 228:

Լեռնային Ղարաբաղից Վարդանյան, Սահակյան, Մանուկյան ընտանիքները: Վերջիններս իրենց հերթին հիմնում են իրենց ազգանվամբ թաղամասեր<sup>1</sup>:

Նույնը առավել կայուն ձևով տարածված էր Արևմտյան Հայաստանում, որի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Չեյթունցին<sup>2</sup>: Ըստ նրա՝ Չեյթունում կային չորս հիմնական թաղեր՝ Շովրոյանների, Յաղուբյանների, Եսիթունյանների և Սուրենյանների: Թվարկված թաղամասերն իրարից բաժանվում էին որոշակի աշխարհագրական սահմաններով՝ ձոր, գետ և այլն, որոնց առկայության պատճառով թաղերը մեկուսացած էին:

Ինչպես գրավոր, այնպես էլ դաշտային ազգագրական նյութերն աներկբա հավաստում են Հայաստանի տարբեր շրջաններում ազգակցական թաղերով բնակեցման համակարգի գոյությունը մինչև XIX դ. վերջերը և XX դ. սկզբները. երևույթ, որ նաև կովկասյան ժողովուրդների կենցաղին բնորոշ ամենակայուն հատկանիշներից էր<sup>3</sup>:

**3. Ամենատարածված ձևը փոքր կազմ ունեցող ազգակցական թաղերն էին**, որոնք ձևավորում էին ամենամոտ ազգականները: Փոքր, առավել մերձավոր ընտանիքներով ապրելու այս սովորույթը պահպանվել է հատկապես խորհրդայնացման շրջանում հարթավայրային բնակավայրերում: Այստեղ ազգակցական կապերը փոխարինվում էին հարևանական տարածքային կապերով: Վ. Բոդյանը 1949 թ. Արտաշատի շրջանի Շահումյան գյուղում դաշտային ազգագրական նյութեր գրառելիս ուշադրություն է դարձրել այստեղ ազգակցական թաղերով բնակվող համակարգի՝ Ղարիբենց և Բարսեղենց ազգակցական թաղերի նկարագրմանը: Հեղինակը գրում է, որ 1949 թ. Ղարիբենց թաղն ուներ հետևյալ պատկերը.

1. Ավագի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
2. Թումասի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
3. Հարթենի տուն = Ղարիբենց ազգից = Ղարիբյան:
4. Առաքելի տուն = Ղարիբենց ազգից = Մայարյան:
5. Ակոբի տուն = Ղարիբենց ազգից = Շահգելոյան:
6. Գաբրիելի տուն = Ղարիբենց ազգից = Շահգելոյան:
7. Եզորի տուն = Ղարիբենց ազգից = Հակոբյան<sup>4</sup>:

Բերված օրինակից դժվար չէ նկատել, որ Ղարիբյան ազգատոհմի ներսում արդեն առաջացել էին դուստր ընտանիքներ, որոնք, սակայն, դեռևս պահպանում էին տարածքային միասնությունը:

Ուշագրավ է, որ ազգակցական թաղերը որոշակի դեր են կատարել կոլեկտիվացման շրջանում: Արտադրական բրիգադները կազմվում էին տարածքային սկզբունքով՝ ընդգրկելով առանձին թաղեր: Դրանք հիմնականում համընկնում էին հին ազգակցական թաղերին: Համատեղ ապրելու սովորույթը շատ հաճախ վճռական դեր է խաղացել հատկապես գյուղի այս կամ այն պաշտոնի ընտրարշավի ժամանակ, երբ յուրաքանչյուր ազգ ձգտում էր համախմբված ընտրել իր ազգականին բրիգադիր, գյուղապետ և այլն: Բացառիկ դեպքերում է, որ գյուղում ազգակցական թաղերի մեջ կարող էին հայտնվել օտար ընտանիքներ: Թաղերով ապրելու սովորույթը խախտվում էր այն դեպքում, երբ թուլանում և անկում էր ապրում ազգապետի հեղինակությունը: Սովորույթի համաձայն, ինչպես նշեցինք, գաղթող ազգականի տունուտեղին տիրանում էին միայն նրա մերձավոր ազգականները:

Ինչո՞վ էր պայմանավորված համատեղ ապրելու ձգտումը: Ամենից առաջ երբեմնի տոհմական համախմբվածության հնագույն ավանդներով, երկրորդ՝ ազգակիցների տնտեսական սերտ կապերով, որ դրսևորվում էր փոխօգնության բազմազան ձևերով, երրորդ՝ բարոյական անաղարտությունն ու ազգի հեղինակությունը պահպանելու ձգտումով, չորրորդ՝ ազգակցական խմբերի միջև ծագող վեճերի ժամանակ համատեղ գործողություններ

<sup>1</sup> Տե՛ս Կարաբեյան Ջ., *Նշվ. աշխ.*, էջ 76:

<sup>2</sup> Տե՛ս Չեյթունցի, *Չեյթունի անցյալն ու ներկայն*, Վիեննա, 1900, էջ 21:

<sup>3</sup> Տե՛ս Կոսվեն Մ., *Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան*, «Պատմաբանասիրական հանդես», 1963, էջ 95-97:

<sup>4</sup> Տե՛ս Եծոյան Բ., *Նշվ. աշխ.*:

ծավալելու, օտարի հարձակումների ժամանակ արագ ինքնապաշտպանություն կազմակերպելու անհրաժեշտությամբ և այլն: Ուստի ազգակցական կցաթաղի մեջ ոչ ազգակից ընտանիքի գոյությունը անհանդուրժելի էր: Ինքնապաշտպանություն ապահովելը պայմանավորված էր ինչպես համատեղ սեփականության՝ հողակտոր, ոռոգման համակարգ, արտավայր, ջրաղաց, ձիթհանք, կալ, գոմ և այլնի պաշտպանությամբ, նյութական համատեղ շահերով, այլ նաև բարոյական չափանիշների համատեղ պահպանմամբ: Եվ, որ ոչ պակաս կարևոր է, օտարի լծի տակ, օտար էթնիկ տարրերի հարևանությամբ ապրելը թելադրել է համախմբվածությունը մշտապես պահպանելու անհրաժեշտությունը:

1920-1930-ական թվականներից ի վեր հասարակական զարգացման նոր պայմանները, աշխատանքի կազմակերպման, հողագործության և անասնապահության նոր ձևերը բնականորեն վերափոխեցին գյուղատնտեսները, աստիճանաբար հիմնվեցին նոր թաղեր, որոնցում կանոնավոր փողոցների վրա, իրենց հատկացված տնամերձ հողամասերում կառուցվեցին լուսավոր, ժամանակակից տներ, վերացան հին ազգակցական թաղերն ու դրանց մնացուկները:

***Рафик Напетян, ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. – НАЧАЛО XX В.).*** В статье рассматриваются традиционные системы расселения в армянских населенных пунктах. С древнейших времен до начала XX в. существовали совместные родовые поселения, реализуемые на основе трех принципов. Начальная форма, которая сохранилась исключительно в горных районах, представляла собой систему расселения рода в пределах одного населенного пункта. Она была наиболее характерна для традиционных обществ. Вторая система была системой расселения, при которой родственники заселяли целый квартал; она была характерна для сравнительно поздних периодов общественного развития.

До начала XX в. для армянских населенных пунктов была характерна традиция общаться через узкие двери или окна в стенах, соединяющих дома представителей рода. Третья и наиболее распространенная в XX в. - это традиция совместного проживания в смежных квартирах наиболее близких с точки зрения родства братских семей. Кварталы, заселенные семьями родственников, были известны под названиями, связанными с именами основателей рода. Даже в наши дни еще сохраняются некоторые сельские населенные пункты, где кварталы носят родовые имена.

***Ключевые слова:*** род, квартал, заселенный родственниками, населенный пункт, Гюмри, зимовники, смежный квартал, семья, родственные могилы, Берд, Сасун, Зангезур.

***Rafik Nahapetyan, THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY – BEGINNING OF XX CENTURY).*** The article has considered the traditional settlement systems in the Armenian residential areas. Since the ancient times up to the beginning of the XX century there have been joint clan settlements implemented on the basis of three principles. The initial form, which has been preserved exclusively in the mountainous regions, was a system of the settlement of a clan within one residential area. It was most characteristic of the traditional societies. The second system was a settlement system in which the relatives settled an entire district; it was characteristic of relatively late periods of the social development.

Until the beginning of the XX century the Armenian residential areas have been characterized by the tradition of communicating through narrow doors or windows in the walls connecting the houses of the representatives of a clan. The third and the most widespread tradition in the XX century was a tradition of cohabitation in the adjacent apartments of the closest

brother families in terms of kinship. The districts inhabited by the families of relatives have been known by the names associated with the names of the founders of a clan. Some rural residential areas, where the districts bear clan names, are still preserved even nowadays.

**Key words:** clan, a district inhabited by relatives, residential area, Gyumri, winter houses, adjacent district, family, graves of relatives, Berd, Sasun, Zangezur.